ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ Պ/Պ,
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ,
ՊՐՈՖԵՍՈՐ ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2-ը փետրվարի 2022թ.

ԿԱՐԾԻՔ

ԳՐԻՇԱ ԳԱԳԻԿԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ «ԱՆԳԼԵՐԵՆ ՏԵՔՍՏԱՅԻՆ ՈՐՄՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼ» ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն ատենախոսությունը նոր լույս է սփռում անգլալեզու որմնագրային խոսույթի վրա՝ համակողմանիորեն քննելով այն լեզվագործաբանական տեսանկյունից: Աշխատանքը կարևորվում է այն պատճառով, որ հայ իրականության մեջ անգլալեզու որմնագրությունն առաջին անգամ է դիտարկվում՝ որպես լեզվական և արտալեզվական միավորներով կազմված տեքստերի համալիր համակարգ: Միևնույն ժամանակ, հատկապես արժեքավոր ենք համարում ընտրված հաղորդակցական դիտանկյունը, որով փորձ է արվել ամբողջացնել հաղորդակցության մոդելավորման սկզբունքների հարացույցը:

Պետք է փաստենք, որ նման բարդ տեքստային համակազմի պայմաններում ատենախոսը հաղթահարել է իր առջև դրված խնդիրները՝ հանգամանալից քննության առնելով անգլալեզու որմնագրության վերաբերյալ տեսական գրականությունը և խնդրո առարկա նյութի ուսումնասիրությամբ սահմանված միտումները:

Հետազոտողը հանգամանալից արտածել է նման նյութի վերլուծության գիտական մեթոդաբանության հենքը: Աշխատանքում մեթոդաբանական սկզբունքներն իրենց կիրառությունն են գտել աշխատանքի գործնական հատվածում: Այսպես, ատենախոսն իր աշխատանքում անդրադարձել է տարբեր լեզվաբանների և տեսաբանների սկզբունքային դիտարկումներին՝ որմնագրության սահմանման, անաչառ գիտական

ընկալման և մեկնաբանության առնչությամբ: Ընդ որում, դիտարկումները հերթագայվել և համադրվել են որոշակի տրամաբանութամբ՝ հաշվի առնելով նույնիսկ նվազագույն առանձնահատկությունները:

Ինչպես հայտնի է, հաղորդակցությունը մարդու կյանքի անքակտելի և անհրաժեշտ մասերից է, ուստի դրա բոլոր տեսակի դրսևորումներն արժանի են ուշադրության և մանրակրկիտ ուսումնասիրության: Իսկ հաղորդակցության տարաբնույթ մոդելների դուրսբերումն էլ ավելի կարևոր է լեզվական հաղորդակցման սկզբնավորման ու զարգացման վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու նպատակով: Ուստի Գրիշա Գագիկի Գասպարյանի հետազոտությունը գալիս է լրացնելու հաղորդակցության մոդելների հարացույցը, ի մասնավորի՝ որմնագրային խոսույթի համակողմանի քննության միջոցով:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Որմնագրություն. տարբեր տեսական մոտեցումներ», բաղկացած է երեք ենթագլխից, որոնցում որմնագրությունն ուսումնասիրվում է որպես համալիր լեզվական երևույթ, բազմաեղանակային հաղորդակցության միջոց և խոսույթ:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Որմնագրային խոսույթի իմաստաստեղծման բնորոշ գծերը», նվիրված է որմնագրային տեքստերում կիրառվող լեզվի գործառույթների քննությանը՝ ըստ Յակոբսոնի առաջադրած տեսության: Ատենախոսության հեղինակն խոսույթի քննադատական վերլուծության լույսի ներքո քննում է լեզվի գործառական հայեցակերպը անգլալեզու որմնագրային տեքստերում՝ դիտարկելով որմնագրությունը որպես ճարտասանական խոսքի նմուշ:

Ատենախոսության երրորդ գլխում («Որմնագրային հաղորդակցության մոդելի ձևավորումը») հետազոտողն անդրադառնում է հաղորդակցությանը և հաղորդակցության մոդելների տեսակներին, որմնագրային հաղորդակցության մոդելի բաղադրիչներին, ինչպես նաև որմնագրային հաղորդակցության մոդելի կառուցվածքին:

Ողջունելի է, որ ատենախոսության մեջ արտացոլվել են գիտական տարաբնույթ հայեցակարգերի համատեքստում իրականացված դիտարկումներ, որոնք, անշուշտ, վկայում են գիտական անաչառության մասին. այսպես, արևմտյան հետազոտական

դպրոցը համադրվում է ռուսական դպրոցի հետ (տե՛ս՝ Գրականության ցանկ՝ կետ 109-116):

Ատենախոսությունն ավարտվում է դրա արդյունքներն ընդհանրացնող եզրակացություններով:

Սույն ատենախոսությունը կատարված է բարեխղճորեն, գիտական առումով հաջողված է, ունի տեսական և գործնական կարևոր նշանակություն: Աշխատանքը գրված է հստակ շարադրանքով և պարզ վերլուծությամբ:

Ատենախոսությունն ունի գրականության հարուստ ցանկ, որն ընդգրկում է հայ, ռուս և արտասահմանյան հեղինակների աշխատություններ, բազմաթիվ համացանցային աղբյուրներ:

Իր բնույթով աշխատանքն ավարտուն և ամբողջական է, այնուամենայնիվ, հետազոտությունը զերծ չէ որոշ ոչ բովանդակային թերություններից: Ինչևէ, ցանկալի կլիներ ստանալ որոշակի պարզաբանում հետևյալ հարցի շուրջ:

Ատենախոսության երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում հեղինակն ուսումնասիրում է հակադրությունները, կրկնությունները, փոխաբերությունները և այլն: Ցանկալի կլիներ մանրամասնել հետազոտողի դիրքորոշումը լեզվական միավորների և երևույթների իմաստաստեղծ գործառույթների վերաբերյալ՝ հատկապես շարահյուսական ոճագիտության և շարահյուսական իմաստաբանության դիրքերին:

Վերը նշված դիտողություններն ամենևին չեն նսեմացնում սույն ատենախոսության գիտական արժեքը: Ակնհայտ է, որ ատենախոսը կատարել է մանրակրկիտ բանասիրական աշխատանք, որտեղ տեղ են գտել ուշագրավ վերլուծություններ և հետազոտողը հանգել է միանգամայն տրամաբանական եզրահանգումների: Աշխատանքն ունի տեսական և գործնական կարևոր արժեք, ուստի կարծում ենք, որ այն հաջողված է և կարող է իր հետագա կիրառությունը գտնել առավել խորքային տիպաբանական, տեքստաբանական հետազոտությունների մեթոդաբանության, նմանատիպ նյութի քննության և զուգադրման ոլորտներում: Ողջունելի է նաև այն հանգամանքը, որ ատենախոսության առանձին էջերում կան հետազոտության առարկան առավել մատչելի, տեսանելի դարձնող պատկերագրային, թվային-վիճակագրական և վերլուծական նյութեր:

Գրիշա Գասպարյանը տպագրել է ատենախոսության առանցքային թեմաներին առնչվող վեց հոդված: Ներկայացված սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը:

Ատենախոսությունը քննարկվել է և վերջինիս վերաբերյալ եզրակացությունը հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2022 թ. փետրվարի 2-ի թիվ 7 ամբիոնի նիստին՝ գիտական հետազոտության սույն ոլորտին առնչակից ոլորտներով զբաղվող մասնագետներ բ. գ. թ. պրոֆեսոր Ե. Մխիթարյանի, բ.գ.թ. դոցենտ Գ. Մելիքյանի, բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանի, բ.գ.թ. դոցենտ Ռ. Ասատրյանի և բ. գ. թ. Ս. Կարապետյանի մասնակցությամբ:

Ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի՝ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջները, ուստի ատենախոս Գրիշա Գագիկի Գասպարյանը արժանի է Ժ. 02. 07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Ռոմանագերմանական լեզուների
և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ

բ.գ.թ., դոցենտ Տիգրան Միքայելյան

Տիգրան Միքայելյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՊՄՀ Ռոմանագիտական գծով պրոռեկտոր, գիտական քարտուղար,
մ. գ. թ., դոցենտ ՄԱՐԻԱՄ ԻՍՊԻՐՅԱՆ